Նախագիծ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020Թ. ՓԵՏՐՎԱՐԻ -Ի
ԹԻՎ -Ա ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի տարեկան եկամուտները ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարեկան նախատեսված 202187.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 220293.9 հազ. դրամ կամ կատարվել է 109.0 % - ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով նախատեսված 22358.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 19491.1 հազ. դրամ կամ կատարվել է 87.2 % - ով:
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար պլանով նախատեսված 54335.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 52942.2 հազ. դրամ կամ կատարվել է 97.4 %-ով:
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 125494.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 147860.6 հազ. դրամ կամ կատարվել է 117.8 %-ով:

2. Տուրքեր

Տուրքեր գծով տարեկան նախատեսված 56217.2 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 53017.1հազ. դրամ կամ կատարվել է 94.3 % - ով՝ այդ թվում.

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 28800.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 28629.6 հազ. դրամ կամ կատարվել է 99.4 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 27417.2 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 24387.5 հազ. դրամ կամ կատարվել է 88.9 %-ով:

Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 835,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 514.0 հազ. դրամ կամ կատարվել է 61.6 %:

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 165.0 հազ. դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 599.0 հազ. դրամով կամ կատարվել են 363.0 % - ով:

գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 35.0 հազ. դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 20.0 հազ. դրամով կամ կատարվել են 57.1 % - ով:

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա համար վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 6077.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 6859.4 հազ. դրամ կամ կատարվել է 112.9 % - ով:

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 2086,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2378.4 հազ. դրամ կամ կատարվել է 114.0 % - ով:

զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գազի և վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի գծով 2700.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2650,0 հազ. դրամ կամ կատարվել է 98.1 %-ով:

է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 575.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 631.3 հազ. դրամ կամ կատարվել է 109.8 %-ով:

ը) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 12444.2 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 7624.4 հազ. դրամ կամ կատարվել է 61.3 %-ով:

թ) համայնքի տարածքում մարդատար տաքսի ծառայություն ընթացիկ տարում իրականացնելու թույտվության մուտքերի գծով նախատեսված 90.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 92.5 հազ. դրամ կամ կատարվել է 102.8 %-ով:

ժ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար նախատեսված 800.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 885.0 հազ. դրամ կամ կատարվել է 110.6 %-ով:

ի) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 360.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 370.0 հազ. դրամ կամ կատարվել է 102.8 %-ով:

լ) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1250,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1513.5 հազ. դրամ կամ կատարվել է 121.1 %-ով:

խ) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 0.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 250.0 հազ. դրամ:

3. Պաշտոնական դրամաշնորհներ

Պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 460816.2հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 456973.3 հազ. դրամ կամ կատարվել է 99.2 %-ով, այդ թվում

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 434124.6 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 434124.6 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 5442.6 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 5421.3 հազ. դրամ կամ կատարվել է 99.6 %-ով:

գ) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) նախատեսված 21249,0 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 17427,4 հազ. դրամ կամ կատարվել է 82,0 %-ով:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 192437,8 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 200598,0 հազ. դրամ կամ կատարվել է 104,2 %-ով:

Նույն թվում՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարների գծով նախատեսված 31797,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 29950,3 հազ. դրամ կամ կատարվել է 94,2 % - ով

2. գույքի վարձակալության գծով նախատեսված 3552,1 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2736,8 հազ. դրամ կամ կատարվել է 77,0 % - ով:

3. ՏԻՄ-ներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 7357,0 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 7357,0 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված 7027,0 հազ. դրամի դիմաց մուտքը կազմել է 6774,8 հազ. դրամ կամ կատարվել է 96,4 %-ով:

5. Տեղական վճարների գծով նախատեսված 139834,7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 138252,0 հազ. դրամ կամ կատարվել է 98,9 % - ով, այդ թվում

- աղբահանության վճարի գծով նախատեսված 46055.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 38796,6 հազ. դրամ կամ կատարվել է 84,2 % - ով.

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 1000.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 10927,1 հազ. դրամ կամ կատարվել է 1092,7 % - ով:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 400.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2830,0 հազ. դրամ կամ կատարվել է 707,5 % - ով:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 1470,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1770,0 հազ. դրամ կամ կատարվել է 120,4 %-ով:

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի ընդամենը տարեկան նախատեսված 911658,2 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 930882,3 հազ. դրամ կամ կատարվել է 102,1 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 443485,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 466552,0 հազ. դրամ կամ կատարվել է 105,2 % - ով:

Արմավիր համայնքի բյուջեի կատարման ընթացքում եկամուտների գծով դեբիտորական պարտքերը առ 31.12.2019թ. կազմում են 470355,3 հազ. դրամ: Դեբիտորական պարտքերի մասին ամփոփ տեղեկությունները կցվում են:

ԾԱԽՍԵՐ

Արմավիր համայնքի 2019թ. տարեկան բյուջեն ըստ ծրագրերի ծախսերը կատարվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.« Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 122400,2 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 108698,5 հազ. դրամ կամ կատարվել է 88,8 %-ով:

2.Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայությունների գծով՝ ՔԿԱԳ բաժին, 01 բաժին 3-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 7357,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 7026,2 հազ. դրամ կամ կատարվել է 95,5 %-ով:

3. « Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 01 բաժին 3-ին խումբ 3-րդ դաս՝ նախատեսված 8345,6 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 7548,4 հազ. դրամ կամ կատարվել է 90,4 %-ով:

4.«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 73286,5 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 40507,5 հազ. դրամ կամ կատարվել է 55,3 %-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 24184,6 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 22953,5 հազ. դրամ կամ կատարվել է 94,9 %-ով:

2. ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 76929,8 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 53323,4 հազ. դրամ կամ կատարվել է 69,3 %-ով:

3.Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆին. ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -3500.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են -6104,7 հազ. դրամ կամ կատարվել է 174,4 %-ով:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 145352,5 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 134127,0 հազ. դրամ կամ կատարվել է 92,3 %-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 1500.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 0.0 հազ. դրամ կամ կատարվել է 0.0 %-ով:

3.Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 33951,3 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 30475,6 հազ. դրամ կամ կատարվել է 89,8 %-ով:

4.Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 3900,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 3721,8 հազ. դրամ կամ կատարվել է 95,4 %-ով:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1.Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 2 դաս՝ նախատեսված 21400,2 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 20125,0 հազ. դրամ կամ կատարվել է 94,0 %-ով:

2.Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 17748,5 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 16617,4 հազ. դրամ կամ կատարվել է 93,6 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 17948,4 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 16090,3 հազ. դրամ կամ կատարվել է 89,6 %-ով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 326709,7 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 305597,1 հազ. դրամ կամ կատարվել է 93,5 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 127756,1 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 115297,0 հազ. դրամ կամ կատարվել է 90,2 %-ով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 7840,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 6213,0 հազ. դրամ կամ կատարվել է 79,2 %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1.ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1-ին խումբ 2 դաս՝ նախատեսված մնացորդային գումարը կազմում է 11237,4 հազ. դրամ:

Ընդամենը Արմավիր համայնքի 2019թ. բյուջեով տարեկան նախատեսված նախատեսված 1024347,8 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 882217,0 հազ. դրամ կամ կատարվել է 86,1 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի պակասուրդը (դեֆիցիտը) նախատեսված -112689,6 հազ. դրամի դիմաց փաստացի հավելուրդը կազմել է 48665,3 հազ. դրամ:

Տարեվերջի ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը 01,01,2020թ. Դրությամբ կազմում է 161354,9 հազ. դրամ:

Արմավիր համայնքի 2019 թ. բյուջեով կատարված շինարարական աշխատանքների և կապիտալ ծախսերի գծով ամփոփ տեղեկատվությունը կցվում է:

Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի կատարման ընթացքում ծախսերի գծով կրեդիտորական պարտքերը կազմում են 2010,0 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքերի մասին ամփոփ տեղեկությունները կցվում են:

ՀՈԱԿ-ների դեբիտորական պարտքը 01.01.2019թ. դրությամբ կազմել է 1993.0 հազ. դրամ, 2019թ. եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 523629.7 հազ. դրամ, որից պետ. պատվերի գծով 3967,4 հազար դրամ, այլ մուտքեր՝ 130,0 հազար դրամ, սուբսիդիա 519844.3 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կազմել են 523941.7 հազ. դրամ, դեբիտորական պարտքը 01.01.2020թ. դրությամբ կազմել է 1681,0 հազ. դրամ: Համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կողմից 2019թ.-ին կատարված եկամուտների և ծախսերի ամփոփը կցվում է:

2017թ., 2018թ. և 2019թ. փաստացի մուտքագրված եկամուտների, եկամուտների գծով պարտքերի, կատարված գործառնական և տնտեսագիտական ծախսերի, դիֆիցիտի, մարման աղբյուրների և ծախսերի գծով պարտքերի համեմատականները կցվում են (համեմատական 1, 2, 3, 4, 5, 6 և 7):